



Համախմբված Ֆինանսական
հաշվետվություններ և

Անկախ աուդիտորի եզրակացություն

"Երևանի Պետական Համալսարան"

Հիմնադրամ

31 դեկտեմբերի 2019թ.



Լիցենզիա ԱԾ 102
Հասցե Նալբանդյան 50/136, ք. Երևան ՀՀ,
Հեռախոս +374(10) 52 08 47

www.4aconsulting.am
info@4aconsulting.am

License ԱԾ 102
Address Nalbandyan 50/136, Yerevan, RA
Telephone +374(10) 52 08 47

Անկախ աուդիտորի եզրակացություն

"Երևանի Պետական Համալսարան" հիմնադրամի ղեկավարությանը և հոգաբարձուներին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել "Երևանի Պետական Համալսարան" հիմնադրամի (Հիմնադրամ) կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2019թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով տալիս են Հիմնադրամի 2019 թվականի ղեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքի և դրամական միջոցների հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության *Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար* բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանքներ

Ցանկանում ենք ուշադրություն հրավիրել այն փաստին, որ ներկայացված համադրելի տվյալները, հիմնված են Հիմնադրամի 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունների տվյալների վրա, որոնց աուդիտն իրականացվել է՝ այլ աուդիտորական կազմակերպության կողմից, որի 27 հունիսի 2019թ. եզրակացությունում արտահայտվել է չձևափոխված կարծիք:

Որպես 2019թ. Համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի մաս՝ մենք իրականացրել ենք համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 24-ում ներկայացված ճշգրտումների աուդիտը, որոնք կիրառվել են նախորդ տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունների տվյալները վերահաշվարկելու համար: Մեր կարծիքով, նշված ճշգրտումները տեղին են և կիրառվել են ըստ պատշաճի: Մեզ չի հանձնարարվել իրականացնել Հիմնադրամի 2018թ. Համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, դիտարկում կամ կիրառել այլ ընթացակարգեր այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների հետ

կապված՝ բացառությամբ նշված ճշգրտումների, այդ իսկ պատճառով, մենք կարծիք կամ որևէ այլ հավաստում չենք արտահայտում Հիմնադրամի 2018թ. Համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համապատասխան սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որը ղեկավարությունը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք: Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են Հիմնադրամի համախմբված ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ների համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կանխաձեռնություն: Ի լրումն՝

- Բացահայտում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:
- Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ

իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևավորել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Մակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Մենք կառավարման լիազոր անձանց նաև տրամադրում ենք հայտարարություն, ըստ որի՝ մենք պահպանել ենք անկախության վերաբերյալ վարքագծի պահանջները, ինչպես նաև նրանց ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և, որտեղ կիրառելի է, նախագրուշական միջոցառումներ մասին:

Կառավարման լիազոր անձանց հաղորդված հարցերից մենք որոշում ենք այն հարցերը, որոնք համալրվել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում, և, հետևաբար, հանդիսանում են օրենսդրությամբ կամ իրավական ակտերով չի արգելվում տվյալ հարցի հրապարակային բացահայտումը, կամ, երբ խիստ բացառիկ հանգամանքներում, որոշում ենք, որ տվյալ հարցը չպետք է ներկայացվի աուդիտորի եզրակացությունում, քանի որ կարող է ողջամտորեն ակնկալվել, որ դրա ներկայացման հետ կապված բացասական հետևանքները ավելի շուտ կլինեն, քան դրա ներկայացմամբ պայմանավորված հանրային օգուտը:

19 հունիսի 2020թ.

Անիկ Մարտիրոսյան

Տնօրեն-Բաժնետեր /Աուդիտի ղեկավար



Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (Վերաներկայացում)
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	70,803,430	48,886,412
Ոչ նյութական ակտիվներ	5	25,714	26,163
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների համար		41	1,879
		<u>70,829,185</u>	<u>48,914,454</u>
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	7	243,270	199,229
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	8	835,937	979,931
Կարճաժամկետ ավանդներ բանկերում		6,409,546	5,281,988
Դրամական միջոցներ և համարժեքներ	9	702,176	659,786
		<u>8,190,929</u>	<u>7,120,934</u>
Ընդամենը ակտիվներ		<u>79,020,114</u>	<u>56,035,388</u>
Զուտ ակտիվներ	23	<u>63,630,568</u>	<u>44,174,386</u>
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Հետաձգված եկամուտ	12	4,331,921	4,373,905
Հետաձգված պարտավորություններ հարկային	6	9,099,702	5,692,184
		<u>13,431,623</u>	<u>10,066,089</u>
Ընթացիկ պարտավորություններ			
Հետաձգված եկամուտ	12	602,524	394,639
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	11	1,028,106	1,040,205
Պահուստներ	10	240,021	216,300
Վարձակալության գծով պարտավորություն		8,141	3,214
Շահութահարկի գծով պարտավորություն		79,131	140,555
		<u>1,957,923</u>	<u>1,794,913</u>
Ընդամենը զուտ ակտիվներ և պարտավորություններ		<u>15,389,546</u>	<u>11,861,002</u>
		<u>79,020,114</u>	<u>56,035,388</u>

Համախմբված Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2020թ. հունիսի 19-ին՝

Կառավարիչ-ռեկտորի մեկ

Գեղամ Գևորգյան

Գլխավոր հաշվապահ

Ռաֆիկ Գրիգորյան

R. Grigoryan

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված Ֆինանսական հաշվետվությունների ռազմավարական հաշվետվությունների հետ միասին 53-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:



Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ուսման վարձերից եկամուտ	13	6,236,991	6,792,332
Եկամուտ շնորհներից		3,371,818	3,174,447
Այլ եկամուտներ		292,045	224,872
Վարձակալությունից եկամուտ		53,578	54,390
Գույքային և այլ շնորհներից		254,194	270,143
		<u>10,208,626</u>	<u>10,516,184</u>
Փոխհատուցում աշխատակիցներին		(7,306,568)	(6,789,909)
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր		(84,648)	(136,596)
Մաշվածություն և ամորտիզացիա		(967,737)	(723,617)
Ապահովագրական ծախսեր		(82,479)	(143,011)
Կրթաթոշակի գծով ծախսեր		(206,036)	(201,907)
Գրասենյակային ծախսեր		(825,093)	(828,060)
Այլ ծախսեր		(385,057)	(467,045)
Գործառնական գործունեությունից շահույթ		<u>351,008</u>	<u>1,226,039</u>
Ֆինանսական եկամուտ	14	481,905	363,151
Այլ ֆինանսական հոդվածներ	15	(17,551)	(38,118)
Տարվա արդյունք մինչև հարկումը		<u>815,362</u>	<u>1,551,072</u>
Շահութահարկի ծախս/փոխհատուցում	գծով 16	395,891	(126,332)
Տարվա արդյունք մինչև հարկումը		<u>1,211,253</u>	<u>1,424,740</u>
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ		18,244,929	-
Վերագնահատումից եկամուտ		<u>18,244,929</u>	<u>-</u>
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ հարկումից հետո		<u>19,456,182</u>	<u>1,424,740</u>
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ		<u>19,456,182</u>	<u>1,424,740</u>

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 53-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
<i>Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Տարվա արդյունք		
Ճշգրտումներ՝	1,211,253	1,424,740
Մաշվածություն և ամորտիզացիա	967,737	723,617
Շահութահարկի գծով ծախս/փոխհատուցում	(395,891)	126,332
Պահուստներ	23,721	(45,480)
Շնորհներից եկամուտ	(3,371,818)	(3,174,447)
Ֆինանսական եկամուտ	(481,905)	(363,151)
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/վնաս	17,551	38,118
Գործառնական շահույթ նախքան շրջանառու կապիտալի փոփոխություններ	(2,029,352)	(1,270,271)
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	145,832	(421,519)
Պաշարների փոփոխություն	(44,041)	(413,140)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	(7,120)	(489,464)
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ	(1,934,681)	(2,594,394)
Վճարված շահութահարկ	(263,000)	(72,771)
Գործառնական գործունեությունից ստացված գույտ դրամական միջոցներ	(2,197,681)	(2,667,165)
<i>Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Կարճաժամկետ ավանդներ բանկերում	(1,133,062)	(601,158)
Ստացված տոկոսներ	468,350	7,655
Հիմնական միջոցների ձեռքբերում	(660,436)	(838,040)
Հիմնական միջոցների օտարում	26,044	227,752
Ներդրումային գործունեությունից ստացված գույտ դրամական միջոցներ	(1,299,104)	(1,203,791)
<i>Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Շնորհներից մուտքեր	3,537,719	3,754,156
Ֆինանսական գործունեության համար ստացված գույտ դրամական միջոցներ	3,537,719	3,754,156
Դրամական միջոցների և դրանց համարժեքների գույտ աճ/նվազում	40,934	(116,800)
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	1,456	57,949
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա սկզբում	659,786	718,637
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջում	702,176	659,786

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 53-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: